ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
**ՆԱԽԱԳԱՀ**

«26» դեկտեմբերի 2018թ. № 2/6601-Ա

# Հ Ր Ա Մ Ա Ն

## Ժ.ԱՂԱՋԱՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 702–Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 5-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի 2018 թվականի թիվ 53/2018 եզրակացությունը

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջը խախտելու՝ սահմանված կարգով տրված հանձնարարականները և ընդունված որոշումները ոչ պատշաճ ձևով կատարելու համար Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության հայցային աշխատանքների և դատական պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ Ժաննա Աղաջանյանին հայտարարել «ԳՐԱՎՈՐ ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ»:

2. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի անձնակազմի կառավարման վարչության պետ Ա.Վարդանյանին՝ սույն հրամանը իրազեկել ողջ անձնակազմին:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 12/25/2018 18:57:19 GMT+4

Signed by: ANANYAN DAVIT 2010710142

ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Դ.ԱՆԱՆՅԱՆ